ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEB1-05C4-4614-AFA7 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎ ՀԻՄՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵԴ2/1184/02/26 քաղ. Երևան
«31» մարտ 2026թ.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Հարությունյանը, քննության առնելով թիվ ԵԴ2/1184/02/26 քաղաքացիական գործով ներկայացված հայցի հիմք և առարկայի փոփոխությունը թույլատրելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

06.02.2025 թվականին Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, մակագրվել է դատավոր Մ. Հարությունյանին։

Դատարանի՝ 11.02.2026 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է։

13.02.2026 թվականին Հայցվորի կողմից կրկին ներկայացվել է

հայցադիմումը՝ կից փաստաթղթերով:

Դատարանը 18.02.2026 թվականին կայացրել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու, գործի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու և ապացույցներ պահանջելու մասին» որոշում, որով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է սահմանվել 01.04.2026 թվականը:

30.03.2026 թվականին Դատարան է ներկայացվել հայցվորի կողմից հայցի հիմքը և առարկան փոփոխելու մասին միջնորդություն:

(I) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

4. Առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:

5. Հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան:

Տվյալ պարագայում Դատարանն արձանագրում է, որ ներկայացված միջնորդությամբ Հայցվորը խնդրել է թույլատրել հայցի հիմքի և առարկայի փոփոխում: Մասնավորապես՝ հայցի փաստական հիմքում դրել է այն հանգամանքը, որ Մարտունիի համայնքապետարանի համայնքի ղեկավարի կողմից 14.01.2026 թվականին կայացվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 27-Ա որոշումը, որն անհիմն է, ըստ այդմ՝ խնդրել է հայցի առարկան փոփոխել հետևյալ կերպ.

«1. Մարտունու համայնքապետարանի կողմից վերջինիս և «ԳԼՈԲՈՆ ԷՆԹԵՐՓՐԱՅՍԻՍ» ՍՊ և «ԷՆԿԻ» ընկերությունների միջև 30.06.2025 թվականին կնքված թիվ «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/09-1» ծածկագրով պայմանագրի

միակողմանի լուծումը ճանաչել անվավեր:

2. Անվավեր ճանաչել (վերացնել) Մարտունիի համայնքապետարանի համայնքի ղեկավարի կողմից՝ «ԳԼՈԲԶՈՆ ԷՆԹԵՐՓՐԱՅՍԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 14.01.2026թ.-ին կայացված թիվ 27-Ա որոշումը:

3. Հայցը բավարարելու դեպքում խնդրում ենք նախապես վճարված պետական տուրքը բռնագանձել Պատասխանողից հօգուտ Հայցվորի»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Հայցվորը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, գրավոր միջնորդություն է ներկայացրել հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ և բացակայում են միջնորդությունը չքննարկելու, մերժելու հիմքերը, Դատարանը եզրահանգում է, որ ներկայացված հայցի առարկայի փոփոխությունը պետք է թույլատրել:

(II) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է բավարարման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքից պահանջել Մարտունիի համայնքապետարանի համայնքի ղեկավարի կողմից 14.01.2026 թվականին կայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 27-Ա որոշման շրջանակում «ԳՄՀ-ՀԲՄԱԾՁԲ-25/09-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվորի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի

փոփոխությունը թույլատրելու մասին, բավարարել:

2 ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքից պահանջել Մարտունիի համայնքապետարանի համայնքի ղեկավարի կողմից 14.01.2026 թվականին կայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 27-Ա որոշման շրջանակում «ԳՄՄՀ-ՀԲՄԱԾՁԲ-25/09-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ **<u>հնգօրյա ժամկետում:</u>**

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Digitally signed by HARUTYUNYAN MALVINA

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am